«ԱԼԻՔ»-Ի ՅԱՒԵԼՒԱԾ

ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԱՐԱՐԱՏ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ
Արարատ Տեղեկատու
թիւ 23
Հոկտեմբեր 2014 թ.

Իրանի 46-րդ Համահայկական Խաղեր Թեհրան 2014

ԱՐԱՐԱՏԻ ՀԵՏ, ԱՐԱՐԱՏԻ ՀԱՄԱՐ

ՄԵԿՆԱՐԿԵՑ ԻՐԱՆԻ 46-ՐԴ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ ՆԻՒԹԱԾ Հ.Մ.«ԱՐԱՐԱՏ»Կ.-Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ 70-ԱՄԵԱԿԻՆ

«Հ.Մ.Ա.Կ.-ը ծնեց հայ ժողովրդի ծոցից, ապրեց ժողովրդի հետ, 70 տարիներ քայլեց հայ ժողովրդի իղձերի ու իդէալների ուղիով եւ դաստիարակեց ազգանւէր սերունդներ: Անցանք երկար ու դժւար տարիների միջով վերելքներով ու անկումներով, յաջողութիւններով և արգելքներով, բայց առանց վհատելու հասանք այս փառաւոր օրւան՝ 46-րդ շրջանի Համահայկական խաղերին: Ողջոյն Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութեան անցեալի ու կեանքի վեհ ու անխոնջ դրօշակակիրներին: Այսօր իր ազգանւէր գործունէութեան 70-ամեակին Հ.Մ.Ա.Կ.-ը կանգնած է աւելի մեծ նպատակի ու առաջադրանքի առջև և դա գաղափարական սերնդի դաստիարակութիւնն է: Փառք ու պատիւ բոլոր այն մարզիկներին որոնք 45 տարիների ընթացքում իրենց դերակատարութեամբ նպաստել են համայնքի և կազմակերպութեան վերելքին»:

Հ.Մ.«Արարատ» Կ.-ի Մարզական միութեան վարչութեան կողմից մայիս ամսին կեանքի կոչւեց Համահայկական խաղերի Կազմակերպիչ յանձնախումբը, որը եւ կեանքի կոչեց ենթայանձնախմբեր՝ գրասենեակի, բացման հանդիսութեան և բանակումի, իսկ հանրութեան հետ կապի գրասենեակը ինչպէս միշտ աշխատում էր յանձնախմբի կողքին: Այս ուղղութեամբ Կենտրոնական յանձնախումբը հանդիպում է ունեցել միութիւնների ներկայացուցիչների, նաև տարբեր շրջանների Համահայկական խաղերի պատասխանատուների, խաղերի անցկացմանը օժանդակողների ու վետերան մարզիկ-մարզուհիների հետ ուր արծարծել են առաջարկութիւններ և եղել են մտքերի փոխանակում:

Ստորեւ ներկայացնում ենք Իրանի 46-րդ Համահայկական խաղերի Կազմակերպիչ յանձնախմբի անւանացանկը՝

Նորիկ Մինասեան՝ նախագահ

Անահիտ Նազարեան՝ փոխնախագահ

Ալինա Թադէոսեան՝ քարտուղարութեան պատասխանատու

Նայիրի Յարութիւնեան՝ նիւթականի պատասխանատու

Սիոնա Շաղքամի՝ գրասենեակի պատասխանատու

Մայիս Մինասեան՝ հիւրընկալութեան պատասխանատու

Քաջունի Արզումանեան՝ բացման հանդիսութեան պատասխանատու

Արամ Օհանեան՝ բանակումի պատասխանատու

Արթին Մինասեան՝ մարզաձեւերի պատասխանատու

Սարօ Աւագեան՝ խորհրդատու

Օրբէլ Ղարադաղեան՝ Վարիչ մարմնի հետ կապ

Հարմիկ Նաւասարդեան՝ Հանրութեան հետ կապ

Հարմիկ Համբարչեան՝ Մարզական միութեան վարչութեան կապ

Ինչպէս արդէն տեղեակ էք այս տարի լրանում է Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութեան յոբելենական 70-ամեակը:



Կազմակերպւած տասնեակ ձեռնարկների և միջոցառումների շարանը հարստացաւ ևս մէկով ՝ համայնքիս մօտ վաղուց տեղ գտած և արմատացած «Համահայկական խաղեր»-ի բացումով: Այս տարի Իրանի Համահայկական 46-րդ մարզական խաղերը առանձնայատուկ էր հէնց դրանով որ համընկնում էր Հ.Մ. «Արարատ» Կ.-ի հիմնադրութեան և գործունէութեան 70-ամեակին:

Թւականիս սեպտեմբերի 10-ի երեկոյեան ժամը 8-ին բազմահազար հայրենակիցների ներկայութեամբ տեղի ունեցաւ 46-րդ Համահայկական խաղերի բացումը: Խաղերի նշանաբանն էր «Արարատի հետ, Արարատի համար»: Մարզաւանի օթեակում ներկայ էին՝ Թ. Հ. Թ. առաջնորդ ՝ Տ. Սեպուհ արք. Սարգսեանը, Իրանում Հ Հ արտակարգ եւ լիազօր դեսպան՝ Գրիգոր Առաքելեանը եւ դիւանագիտական աշխատակազմը, Իրանի արդիւնաբերութեան և հանքերի փոխնախարար պրն.՝ Քարքասեանը, Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի եւ Հ. Մ. Մ. «Արարատ» միութեան ներկայացուցիչներ, Թ. Հ. Թ. Պատգամաւորական ժողովի, Թեմական խորհրդի, Կրթական խորհրդի, ազգային մարմինների ու միութիւնների, «Ալիք» հաստատութեան ու օրաթերթի ներկայացուցիչները եւ հոգեւոր հայրերը: Ներկայ էին մի շարք տեղական լրագրողներ:

10 օր տեւողութիւն ունեցող այս տարւայ խաղերին մասնակցում էին աւելի քան 800 մարզիկ-ուհիներ 8 մարզաձևերում՝ բասկետբոլ, ֆուտբոլ, ճատրակ, թեթեւ ատլետ, թենիս, պինգ-պոնգ, ժայռամագլցում եւ լող: 46-րդ Համահայկական խաղերին իրենց մասնակցութիւնն են բերել Թեհրանի 10 միութիւններից, Իրանի հայահոծ քաղաքներից՝ Նոր Ջուղայից, Շահինշահրից, նաև Հայաստանից և Աւստրիայից, Հ. Մ. «Արարատ» Կ.-ի մասնաճիւղերից՝ Թաւրիզից, Ուրմիահից և Գեղարդաբադից մարզիկներ :

Ֆուտբոլի դաշտի կենտրոնում տեղադրւած էր եօթանասուն համարի տեսքով գեղեցիկ պաստառ ի նշան Հ. Մ. «Արարատ» Կ. -ի 70-ամեակին: Սկաուտների միջոցով մարզադաշտ բերւեց և ծածանւեց Իրանի Իսլ. Հանրապետութեան և Համահայկական խաղերի դրօշը և ժողովրդի յոտնկայս ծափողջոյների ներքոյ, հնչեց հերթականաբար ԻԻՀ-ի ու «Արարատ»-ի հիմներգերը:

Իրանի և Համահայկական խաղերի դրօշակների մուտքը աւետում է մեզ մարզաշխարհում մի նոր մրցաշրջանի խոստումնալից մրցութիւնների սկիզբ
Սկիզբ համախոհութեան և բարեկամութեան
Սկիզբ ապագայի նորանոր լուսնշող խոյեանքների

Նշելի է, որ ծրագրի ընթացքին հաղորդավարներ՝ Արտոյտ Չոհրաբեանը և կազմակերպիչ յանձնախմբի փոխատենապետ՝ Անահիտ Նազարեանը որը ևս արտայայտւեց Կազմակերպիչ յանձնախմբի անունից, հնչեցնում էին օրւան համապատասխան կարգախօսներ Մեծ խանդավառութիւն առաջացրեց հայրենակիցների մօտ երբ յայտարարւեց թէ՝Յունաստանի խորհրդարանն ընդունել է Ցեղասպանութեան ժխտումը քրեականացնող օրինագիծը: Ծրագիրը շարունակեց «Հայ կին» միութեան կից «Անահիտ» միութեան «Ձւարթնոց» երգչախումբը՝ պրն. Էդիկ Թամրազեանի ղեկավարութեամբ որոնք հնչեցրին հայերէն և պարսկերէն երգեր: Ընթերցւեց Նոր Ջուղայի Հ. Մ. Մ. «Արարատ» միութեան յղած ուղերձը: Ապա մարզիկ-ուհիները երաժշտութեան և ժողովրդի քաջալերանքների ներքոյ մուտք գործեցին մարզադաշտ և տեղակայւեցին իրենց նախատեսւած տեղերում: Ծրագրի ընթացքում երկու էկրանների վրայ հանրութեանը ցուցադրւեց տեսաֆիլմեր՝ «Արարատ»-ի Համահայկական խաղերի պատմական ընթացքից, ջահի օրինման արարողութիւնից և «Արարատ»-ի այն երիտասարդ մարզիկ-ուհիների հետ հարցազրոյցից՝ որոնք ներկայիս հրաւիրւել կամ ընդգրկւած են Իրանի հաւաքականներում և ունեցել են մի շարք միջազգային յաջողութիւններ:

Համահայկական խաղերի ջահի օրինման արարողակարգը կատարւել էր թւականիս սեպտ. 5-ին Թեհրանի Ս. Աստւածածին եկեղեցում Թեհրանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Մակար եպիսկոպոս Աշգարեանի ձեռամբ, Ջահը փոխադրւել է նախ «Արարատ» կենտրոնատեղի, որտեղ հաւաքւած միութենականները խանդավառութեամբ են դիմաւորել ջահակիրներին: Օրւայ խօսքը արտայայտեց Կ.Վ.-ի փոխնախագահ Արմինէ Սեթխանեանը, համեստ ընդունելութիւնից յետոյ օրինւած ջահը, հեծանւավազքի ազգային հաւաքականի անդամ Նարբէյ Հախվերդեանի միջոցով տեղափոխւել էր Մարզաւանի Ս. Խաչ մատուռ և պահպանւել էր մինչև ծրագրի հանդիսաւոր բացման օրը: Օրւայ ջահակիրների խմբում են եղել նաև Իրանի բասկետբոլի ազգային հաւաքականի աղջկանց խմբի մարզուհիներ՝ Էդնա Իսայեանը, Նարինէ Արտաշեանը, Այրին Արթունեանը, Վանա Մուսախանեանը և Վանէ Խեչումեանը, և տղայոց բասկետբոլի երիտասարդական խմբի մարզիկներ՝ Արմի Նազարեանը և Դրօ Տէր Ղուկասեանը: Ջահի մարզադաշտ բերման արարողութիւնը սկիզբ առաւ՝ Նարբէ Հախվերդեանի միջոցով, ընթացքը շարունակեց Մարզական միութեան անդամ Նայիրի Մարտիրոսեանը մարզական միութիւնից և ի վերջոյ Հ. Մ. «Արարատ» Կ.-ի հիմնադիր անդամներ ընկ.՝ Յասմիկ Յարութիւնեանի և ընկ.՝ Աշոտ Ստեփանեանի ձեռամբ բոցավառւեց որոնք իրենց կարևոր և անվերապահ ներդրումն են ունեցել Կազմակերպութեան հիմնադրման աշխատանքներում:







Գրագրութիւն՝ Սեդրակ Կ.

ԹՈՂ ԱՅՍ ՁԱՀԸ ԲՈԼՈՐԻՍ ՍՐՏԻՄ ԸՆԴՍԻՆՑ ԲՈՑԱՎԱՌ ՄՆԱՑ ՅԱՆՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՈԳՈՒ ԳՈՑԱՑԱՄԱՆ և ՅԱՐԱՏԱՄԱՆ

Այնուհետև ընթերցւեց իրաւարարների և մարզիկի երդումները հերթաբար՝ Հ.Մ.Ա.Կ.-ի Մարզական միութեան վալիբալի խմբի մարզուհի և երրորդ կարգի իրավարար՝ Նազելի Թահմազեանի և մարզական միութեան աղջկանց բասկետբոլի պատանեկան խմբի մարզուհի և աղջ. բասկետբոլի ազգային հաւաքականի կազմի երիտ. խմբի հրաւիրեալ՝ Փիլիպ Առաքելեանի միջոցով:

Կենտրոնական Վարչութեան անունից պարսիկ հիւրերի համար ուղերձ ընթերցեց Կազմակերպութեան փոխնախագահ՝ ընկ. Արմինէ Սեթխանեանը: Նա բարի գալուստ մաղթելով ներկաներին բացած համարեց Իրանի 46-րդ համահայկական խաղերը: Աւելացնելով, որ 70-տարիների յարատև աշխատանքը պարտական ենք այն անձնազոհ ընկերների որոնք այսօր մեր կողքին են կամ նրանց յիշատակը առյաւետ մնալու է մեր հոգում: Յուսով ենք ականատես կը լինենք մեր երիտասարդների փայլուն յաջողութիւններին և մեր մարզիկները մարզիկին վայել կեցւածքով միշտ վառ կը պահեն կազմակերպութեան գահը:

Իր հայրական խօսքը փոխանցեց Թ. Հ. Թ. Առաջնորդ Տ. Սեպուհ արք. Սարգսեանը: Սրբազան Հայրը իր ջերմ շնորհաւորանքը մաղթեց Հ. Մ. «Արարատ» Կ.-ի ողջ ընտանիքին հիմնադրութեան 70-ամեակի առիթով: Կարևորելով, որ այս տարի լրանում է Հայոց ցեղասպանութեան 100-ամեակը ու անհրաժեշտ է հայ ժողովրդի էլ աւելի միասնականութիւնը և համախմբւածութիւնը և գնահատեց այն երկրների պետութիւններին, որոնք ընդունել են Հայոց Ցեղասպանութիւնը և իրենց ժողովրդի մէջ սերում են ճշմարտութիւն և մարդկային բարձր արժէքներ: Խօսքը ուղղելով մարզիկ-ուհիներին շարունակեց, որ երբ միմեանց հետ պիտի լինէք, երբ միմեանց հետ պիտի մրցէք, իմացէք որ դուք որպէս հարազատ հայրենակիցներ, արիւնակիցներ և բարեկամներ պիտի մրցակցէք և ոչ որպէս տարբեր միութիւնների անդամներ: Ամէն ազգ պիտի ունենայ դէպի ապագայ հեռանկար որպէսզի հասնի իր նպատակին ու ես վստահ եմ որ մենք կը կերտենք մեր ամբողջական հայրենիքը և Արցախը, Սփիւռքի և ամբողջ հայութեան համախմբւածութեամբ:

Այնուհետև ծրագիրը շարունակւեց գեղարւեստական կատարումներով՝ «Արարատ» պարախումբը ելոյթ ունեցաւ ղեկավարութեամբ Անահիտ Աւետեանի, երգերով հանդէս եկան Էդիթ Հայրապետեանը իր նւագախմբով, Կարինէ Մուրադեանը, Մանէ Թահմազեանը, Արմէն Աստւածատրեանի երաժշտական համադրութեամբ: Վերջում տեղի ունեցաւ գեղեցիկ հրաւառութիւն: Երեկոն շարունակւեց մինչև ուշ գիշեր և ժողովուրդը մեծ գոհունակութեամբ թողեց մարզաւանը:

10-օրեայ խաղերի ընթացքին տեղի է ունեցել երաժշտական ներկայացումներ երիտասարդների կատարումներով, կատարւել է Իրանի պատանեկան տղ. բասկետբոլի հաւաքականի խմբի մրցոյթը Արարատ պատանեկան տղ. բասկետբոլի խմբի հետ և 70-ամեակի առիթով կատարւել է արեան տւչութիւն:



Բանուկ էին Երէցների կրպակը և Սկաուտական միութեան բարեգործական նպատակով կազմակերպւած կրպակը:

Ստորև ներկայացնում ենք Իրանի 46-րդ Համահայկական խաղերի յանձնախմբերը՝

46-րդ Համահայկական խաղերի գրասենեակի յանձնախումբ

Սիոնա Շաղքամի
Արգինէ Պետրոսեան
Անի Խեչումեան
Էմինէ Դաւթեան
Նազելի Թահմազեան
Արփի Սարգսեան
Անայիս Ղուկասեան
Մելանի Ղարադաղի
Անիտա Ահանգարեան
Քրիստինէ Ղարադաղի
Մենուա Աւետեան

46-րդ Համահայկական խաղերի Բացման յանձնախումբ

Քաջունի Արզումանեան
Թարա Մալխասեան
Էլին Աւագեան
Րաֆֆի Զարիֆեան
Վահէ Աբեդ
Նարբէյ Հախվերդեան
Սեդրակ Գոջամանեան
Ալբերտ Դանիէլեան
Րաֆֆի Յովհաննիսեան
Սևան Շահիմիրեան
Արէն Սաֆարեան
Սևակ Թովմասեան
Էջմին Մատթէոսեան

46-րդ Համահայկական խաղերի Բանակումի յանձնախումբ

Արամ Օհանեան
Սարմէն Աստւածատրեան
Րաֆֆի Յովհաննիսեան
Ալբերտ Դանիէլեան
Միեր Խաչիկեան
Արգիշտ Սինանի
Մենուա Աւետեան
Թումիկ Վարդանեան
Անիկա Ղազարեան
Նարինէ Ղազարեան
Սիորէտ Սաֆարեան
Փրենի Համբարձեան
Արամ Մելիքեան
Արգին Շահիազեան
Սիփան Մարգարեան
Արամիկ Ասատրեան
Ադէն Յարութիւնեան

Հանրութեան հետ կապի յանձնախումբ և 46-րդ Համահայկական խաղերի հանրային կապի գրասենեակ

Լիլիան Արթունեան
Արինէ Բադալեան
Ռուզան Մարգարեան
Հարմիկ Նաւասարդեան
Անահիտ Աբրահամեան
Ալէն Ամիրեան
Սևադա Յարութիւնեան


Օժանդակներ՝

Արութին Աղազարեան
Էդիթ Աղաբէգեան
Նարէ Խայեան
Իւետ Թամրազեան
Մարօ Յովհաննիսեան


Լուսանկարիչներ՝


Ռեբեկա Վարդանեան
Աղենա Քեշիշեան
Գէորգ Յարութիւնեան
Հենրիկ Ղարաբէգեան
Սևակ Թովմասեան
Մինէլի Պետրոսեան
Կարին Ղարիբեան
Արմանդ Սանասարեան
Արիգա Բաթրէսեան
Արէն Խալոյեան
















ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ



ԲԱՆԱԿՈՒՄԻ ԵՆԹԱՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ



ՃԱՇԱՐԱՆ

ՄԱՐԶԱՁԵՒԵՐ
































ՄԱՍՆԱԿՑՈՂ ԽՄԲԵՐ



Հ.Մ.«Արարատ»Կ. երիտ. Օր. թիւ 1 խումբ



Հ.Մ.«Արարատ»Կ. երիտ. Օր. թիւ 2 խումբ



Ն.Ջուղայի «Արարատ» միութիւն երիտ. Օր.



Հ.Մ.«Րաֆֆի» համալիր երիտ. Օր.



Հ.Մ.Ա.Կ.-ի Սկաուտական միութիւն երիտ. Օր.



Ն.Ջուղայի «Արարատ» միութիւն երէց. Օր.



Հ.Մ.«Արարատ»Կ. երէց. Օր.



Հայաստան երէց. Օր.



Ընկերական մինի բասկետբոլի մրցութիւն
Արարատ-Խալիջ համիշէ ֆարս



Հ.Մ.«Արարատ».Կ. երէց. տղ. թիւ 1 խումբ



Հ.Մ.«Արարատ».Կ. երէց. տղ. թիւ 2 խումբ



Հ.Ուս. Չհարմահալ միութիւն երէց. տղ.



Հայաստան երէց. տղ.



Ն.Ջուղայի «Արարատ» միութիւն երէց. տղ.



Հ.Մ.«Րաֆֆի» համալիր երէց. տղ.



Հ.Մ.«Սիփան» միութիւն երէց. տղ. թիւ 1 խումբ



Հ.Մ.«Սիփան» միութիւն երէց. տղ. թիւ 2 խումբ



Հ.Մ.«Արարատ»Կ.-ի Ուրմիոյ մասնաճիւղ երէց. տղ.



Հ.Մ.«Արարատ»Կ. երիտ. տղ.



Ն.Ջուղայի «Արարատ» միութիւն երիտ. տղ.



Հ.Մ.«Րաֆֆի» համալիր երիտ. տղ.



Հ.Մ.«Սիփան» միութիւն երիտ. տղ.



Հ.Մ.«Արարատ»Կ.-ի Թաւրիզի մասնաճիւղ երիտ. տղ.



Հ.Մ.«Արարատ»Կ.-ի Ուրմիոյ մասնաճիւղ երիտ. տղ.



Հ.Համալսարանական Ընդհ. միութիւն



Ն.Ջուղայի «Արարատ» միութիւն



Հ.Մ.«Նայիրի» միութիւն



Ն.Ջուղայի «Սևան» միութիւն



Հ.Մ.«Սարդարապատ» միութիւն



Հ.Մ.«Րաֆֆի» համալիր



Հ.Մ.«Արարատ»Կ.

46-րդ շրջանի Համահայկական խաղերի Մեդալների և Ընդհանուր նիշերի պատկեր

Միութիւն	Ոսկի		Արծաթ		Բրոնզ		Ընդ. Նիշ
	Օր.	Տղ.	Օր.	Տղ.	Օր.	Տղ.	
Հ.Մ.Ա.Կ.	16	18	16	13	15	18	545
Ն. Ջուղա	8	7	5	15	8	10	294
Սիփան	3	7	-	6	4	7	149
Րաֆֆի	1	2	2	1	2	1	51
Սարդարապատ	1	1	2	1	1	2	43
Թաւրիզ	2	-	-	1	2	2	34
Սևան	-	-	2	-	-	3	21
Փերիա	-	-	2	-	3	-	21
Նայիրի	-	2	-	-	-	-	16
Ուրմիա	-	1	-	-	-	2	14
Շահինշահր	-	-	-	1	-	-	6
Հ.Բ.Ը.Մ.	-	-	-	-	1	1	6
Հ.Մ.Ա.Կ. Սկաուտ.	-	-	-	-	1	1	6
Հայաստան	-	-	1	-	-	-	6
Չհարմհալ	-	-	-	-	-	-	0
Հ.Հ.Ը.Մ.	-	-	-	-	-	-	0
Գեարդաբադ	-	-	-	-	-	-	0
Վիեննա	-	-	-	-	-	-	0

ՄԵԴԱԼԱԲԱՇԽՈՒՄՆԵՐԻՑ ՊԱՏԿԵՐՆԵՐ



































Հանրութեան հետ կապի կազմ



Գրասենեակի կազմ

Յաջողութիւն ենք մաղթում բոլոր մարզիկ-ուհիներին եւ շնորհակալութիւն ենք յայտնում օժանդակութիւն ցուցաբերած անձանց: